

Փոքր Յովհաննէս Ծարեցի խօսելով մեծ Յովհաննէս Ծարեցւոյ († 1583) մասին կը գրէ²⁸ թէ անիկա աշակերտն էր «մեծ վարդապետին Ղուկասու Հաղբատացւոյ»: Ի խրնդրոյ աշակերտին օրինակած է Ղուկաս Քարոզաղիրք մը²⁹, որ զժբախտաբար առանց թուականի է: Յիշատակագրութեան մը մէջ կը գրէ. «յորոց փրկեսցէ Քրիստոս Աստուած զգծող զրոցս զՂուկաս վարդապետ եւ զստացող զտէր Յովհաննէս զրոց աշակերտն» (Թղ. 274 ա): Այլուր կը գրէ. «Ով... եղբայր տէր Յովհաննէս աշակերտ բանին կենաց, ի ժամանակի ձմերան ծաղիկ վարդ խնդրես. այժմ բարձեալ է իմաստութիւնն եւ սրբութիւնն աշխարհէս. եւ ես մարդ մեղաւոր եւ մտաւք հուրացեալ եւ արամութեամբ տարակուսեալ. զրեցի զՔարոզս ըստ խնդրուածոց սրտի քո. սայ շնորհաւոր քեզ եղիցի» (Թղ. 485 բ): Նոյն ձեռագրէն կը տեսնուի թէ առ ոտս Վարդապետին կ'աշակերտէին նաեւ Ղուկաս ի Գողթան դաւառէ, Մկրտիչ որ է յերկրէն Քաջբերունեաց եւ Թորոս: Այս Թորոսը 1561ին Ձաքարիա եպիսկոպոս Գնունեցւոյ օրինակել տուած է Յայսմաւուրք մը³⁰, որ ի սկզբան սահմանուած էր Թեղեհեանաց վանքին, բայց

²⁸ Սամուէլ Անեցի, Յաւելուած, էջ 192:

²⁹ Աճառեան, Յուցակ հայ. ձեռագր. Թաւրիզի, էջ 5—6:

³⁰ Հ. Յ. Գօսեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Արժնեան Վարժարանի, Թ. 8 = 809: